



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

5597. ՏԱՐԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 44

27 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1907

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Նաեմ Կեդրոնականը

Լուսնի ծագումը Լիբանանի Սարեեմ

Լուսաբանությունը մի

Գառմեմ Սիլվա

Պալլոյի Աշխարհագրական Գեոգրաֆիկներ

Աղբյուր

Ջյուսք [Պ. Խաչատյան]

Սանթա Լուչիա

Իզամեմ

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ՆԵՐՍԷՍ ՎԱՐԴ. ԴԱՆԻԷԼԵԱՆ

ՋԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆ

ԲԻԷՌ ԼՕՅԻ

ԱՐՄԵՆԱԿ ԻՆՃԷԱՆ

ՄԵՐՈՒԺԱՆ՝ ՊԱՐՍԱՄԵԱՆ

ՄԻՀՐԱՆ ՈՒՂՈՒՐԼԵԱՆ

ՀՐԱՆՏ ՆԱԶԱՐԵԱՆ

[Պատմաբան ՉՈԵՐԻԼՍ-Ի]

ՕՐ. Ն. ԱՔԻԼԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. ՃԻՀՅՆ

1907

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

յԵՐԱ., ԹԱԴՍԻՄ ՓՈՂՈՅ,
ԹԻԻ 12

աղիքներու, միզային ճամբաներու հիւանդութիւնները, ջղային ախտութիւնները, հին և նոր դաղիակաւ ախտերը: Այս վերջին ախտերը՝ առանց ստամոքսի խանգարման և նորագոյն մեթոտներով կը բուժէ կարճ միջոցի մէջ: Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը: Չորեքշաբթի օրերը միայն ձրի:



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ զէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց և ազդատկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոսքի ու ոսքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. այս մեքենան ամէնէն աւելի կատարելագործուածը, հաստատունը և դիւրագործածելին ըլլալուն՝ բոլորաշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկերի Բնկերութեան վաճառատուններուն մէջ՝

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

ԿԱՆԱԾԱՆ

ԲԵՐՍ.

ՊՈԼԻՍ

ՍԵՐԻՍԵՐ

1. Մեծ փողոց, Պօն Մառէի դէմ, 343 և 343.
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.
1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
2. Դարաքէոյ, Թրամվէյի կայարանին դէմ.
1. Սուլթան Համամ.
2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայանին դէմ. 13.
- 2 արշը Պօյու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնները ձրի:

Կատարելաբար Երաւաստութիւն:

Մասնաճիւղեր գաւառներու բոլոր փաղափեւում մեջ

Սինկերի Բնկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ Փողոց, Թիւ 343 և 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը:



ՄԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ

ԵՆՈՎՔ ԵՐՄԷՆ

ԾԵՐԴ. ՏԱՐԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 44

27 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1907

ՆՈՐԷՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆԸ

Խորագիրս տեմնելով, հիմա պիտի ելլեն ըսեն որ անպատճառ բան մը ունիմ կեդրոնականին հետ: Ա՛յ է դատելու կերպը մեր մէջ. և քիչ մըն ալ իրաւունքով թերեւս, որովհետեւ հրապարակային մարդիկ՝ որ գրիչ շարժած են հանրային խնդիրներու շուրջը, շատ անգամ կեղծած են իրենց զգացումը և խօսած են մասնաւոր նկատումներէ միայն շարժած, իրենց հրատարակութիւններուն մէջ դնելով նպատակաւոր շահախնդրութեան մը և անձնական կիրք յագեցնելու ոգին: Քիչեր է որ իրենց խօսքին մէջ ունեցած են ճշմարիտ համոզումի և Սկզբունքի համար հրապարակախօսելու նշանաբանը, զերծ կանխակալ նկատումներու և ետապաշտ շահախնդրութեան զսպանակէն, որ ուղղած և առաջնորդած է քայլը մեր շատ մը գրիչի մարդոց, օրուան հաշիւներուն ու կիրքերուն համեմատ գոյն տալով իրենց խօսքին, և իրենց ալ, — տեսակ մը girouette, որ փչող հովերուն կտրմը կը դառնայ և որուն այս վայրկեանի նշանը քիչ ետքինը չբռնէր:

Ո՛չ , երկու շաբաթ վրայէ վրայ Կեդրոնականի շուրջը գրե-
լով՝ նպատակս չկրնար ըլլալ մը և է կանխամտած չարաշա-
հաւթիւն : Ընդհակառակը , շա՛տ պատկաստ ալկնածանք մըն է
որ կը գրաւէ զիս հանդէպ Կեդրոնականին , իրը արգիւնաշատ
նախրական աւանդի մը և մեր բարձրագոյն կարեւոր մէկ վար-
ժարանին , զոր պէտք ենք ամէնքս սիրել , մեր ամէնէն տաք
գութգութանքը ձօնելով անոր անունին ու գոյութեանը :

Ինչ որ զիս ու ամէնը պէտք է զբաղեցնէ , իր շահն է , իր
բաղձալի կատարելութիւնով չորժունէութեան մտածումը , որուն
անունով է որ կը ներկայացնեմ հետեւեալ նկատողութիւնները՝
ուշադրութեանը օրո՛ւն որ պէտք է : Այդ խորհրդածութիւնը նոր
ու առաջին անգամ յայտնուող վարկած մը ըլլայ ի երես, հետե-
ւորար ցնցէ աւանդական սովորամոլութենէ շարժող և ճիշդ
կամ սխալ անս'վ վարուող շատ մը միտքեր . բայց ատոր համար
չդադրիր ան կենսական կարեւորութիւն ունեցող և լուրջ նկա-
տածութեան արժանի հարց մը ըլլալէ :

Կեդրոնականի մէջ աւանդուող շատ մը ուսումներ և գի-
տութիւններ՝ յայտնի է թէ կը դասախօսուին հայերէնով . և
ատանկ առաջ կը տարուի անոր զօրժունէութիւնը , առանց որ
մէկը անդրադառնայ թէ՛ ճի՛շդ է թէ սխալ այդ ուղղութիւնը՝
Կեդրոնականին համար : Այսպէս , հայերէնով կը դասախօսուին
Ընդհանուր Ազգերու Պատմութիւն , Բաղաքական Տնտեսութիւն ,
Երկրաչափութիւն և Գրահաշիւ [Ա.—Գ. կարգերու մէջ] , Աշխարհա-
գրութիւն , Փիլիսոփայութիւն և իր Պատմութիւնը , Ընդհ. Եկե-
ղեցական Պատմութիւն , Տոմարակալութիւն , Բաղաքակրթու-
թեան Պատմութիւն և Գիտութեան շատ մը ճիւղերը : Եւ ,
ո՛չ միայն հայերէնով՝ կ'աւանդուին այս ուսումները , այլ ,
հայերէն լաւագոյն դասագիրքերու չլոյսթեան պատճառով՝
ուսանողները հարկադրուած են սեփականելով զիր գրեւ, դա-
նոնք ծառայեցնելու համար դասագիրքի տեղ : Արդ , ճի՛շդ է
այս ուղղութիւնը և օրինաւոր արդարացում մը ունի՞ : Այս ուղ-
ղութիւնը , իր երկու անշատ բաժանումներուն մէջ , — *կայերէ-
նով դասախօսել և սեփականելով զիր գրեւ սալ* , — պարզ ժա-
մաւաճառութիւն է և անխմստ գրութիւն մը՝ զոր անհաշիւ
օրգեգրեր է Կեդրոնականը , չգիտցուիր ի՛նչ նկատուով :

Տեւական անխորհելի գանդատ մը կայ թէ՛ Կեդրոնականի ընթացաւորտները տկնկալուածին և պէտք եղածին չափ դորաւոր չեն ֆրանսերէնի խօսելալարժուութեան [pratique] մէջ, — մոռնա՛նք զբական և զբաղխատական հմտութիւնը և կարողութիւնը, — ի՛նչ որ մեծ պահանջք մըն է իրենց ընդգրկելիք ասպարէզին ու կոչումին մէջ :

Միւս կողմէ, ուսանող մը՝ որ Կեդրոնականի կ'աշակերտի, հայերէն սորվելու, հայերէ՛նը միայն մշակելու համար չէ՛ որ տարիներ կը վատնէ հոն : Ան՝ հայերէնը զիտէ՛ պէտք եղածին չափ, կամ կրնայ սորվի՛ր իր հայերէնի դասերէն :

Այս պայմաններուն մէջ, ի՛նչ պէտք կը մնայ հայերէնով դասաւանդելու ա՛յն տեսակ ուսումնէր, զորս ֆրանսերէնի մրայէ սորվեցնել ո՛չ միայն մեծ աւտելութիւններ կը ներկայացնէ, այլ պահանջք մըն է Կեդրոնականին համար, որովհետեւ աճող միայն ուսանողները պիտի կրնան տիրանալ ա՛յն ֆրանսերէնին, որով հմտացած կ'ուզէ տեսնել զանոնք ամէն մարդ : Փրանսերէն աւանդելով այդ գիտութիւնները և ուսումները, ուսանողները ո՛չ միայն ձեռքերնին պիտի կրնան ունենալ շաւազոյն դասագիրքերը, այլ զերծ պիտի ըլլան նաեւ — և կ'զգա՞ք մեծութիւնը այս օգուտին — պարագայ տեղը լեռնակուտակ գիր գրելու ստիպողականութենէն, դրաւոր դասագիրքեր յօրինելու և գործածելու անպէտ ու չլատիչ պահանջէն, ինչ որ կոսկա՛ծ չի կայ, կ'սպաննէ ուսանողին ամբողջ կորովը և անոր մէջքը կը կոտրէ : Ի՛նչ է իմաստը տետրակնէ՛ր լեցնող այդ գիրքին, և կը մտածե՞ն թէ ուսանող մը իր ժամանակին ի՛նչ չափ մասը կը վատնէ զուր տեղը, նախ գրելու համար դասը, ետքէն անկէ բան սորվելու համար : Հարցնե՛ն թող անգամ մը այդ ահաւոր աղաւակին ըծուած դպրոցականներուն թէ՛ ի՛նչ կը քաշեն անոր երեսէն : Եւ այդ չարատանջ յոգնութենէն, պժղալի տաղտուկէն ետքը՝ կ'սպասեն որ ան սիրտ ունենայ լայնօրէն աշխատելու և մարտելու դասերուն ոգին : Եւ բոլոր ասոնք նուիրագործուած սխալի մը հետեւանքով, որ է ֆրանսերէն գիրք չգործածելու դրութիւնը ա՛յն ուսումներուն մէջ, որոնք պէ՛տք են, ստիպողական է, կարեւո՛ր է որ աւանդուին ֆրանսերէն դասագիրքով և ֆրանս

սերէն լեզուով, որպէս զի ուսանողները կարենան աւելի՛ զօրաւոր
կերպով տիրանալ ու հմտանալ ֆրանսերէնին, և քանի որ ո՛ր
եւ է շահ ու պատճառ չի կա՛յ՝ զանոնք հայերէնով և ձեռագիր
ճեւղակներով աւանդելու:

Ա՛ . . . կը մտնամ. եթէ ո՛ր և է շահ ու պատճառ չի կայ
ատոր, կա՛յ նկատում մը, որ . . . չէ՞ք գուշակեր . . .

Այն ատե՛ն, պէտք պիտի ըլլայ ճամբայ տալ մեծ թիւի մը
ուսուցիչներու, որոնք հոն որջացած են այդ ուսումները հայե-
րէնով միայն աւանդել կարենալնուն և հայերէնով աւանդելու
համար, քանի որ չեն կրնար ֆրանսէրէնով աւանդել Եւ ասիկա, —
ամէն պատճառի ու շահի դէմ դնող այս պատճառը, այս հզօր
նկատումը, — կը կասեցնէ շարժումը կեդրոնականի վարիչներուն,
գլխած ու կարեկից ղեաղումներու յուշումովը խռովելով
զանոնք:

Բայց Ապագայ Սերունդը կազմելու պատրաստուող ուսա-
նողներուն շահը՝ վե՛ր է ամէն շահէ ու նկատումէ: Եւ եթէ
կուզեն գտարկ ժամավաճառութիւններով, անպէտ յոգնու-
թիւններով, մոլար մեթոտներով չսպաննել անոնց ժամանակը և
տա՛լ այն դաստիարակութիւնը և զարգացումը՝ զոր ամէն մարդ
կ'սպասէ կեդրոնականէն, պէտք է մտածեն կեդրոնականի գոր-
ծունէութեանը և կրթական ծրագիրին մէջ կենտրոնական կարեւո-
րութիւն ունեցող այս հարցին վրայ, պէտք է զայն լուրջ
նկատողութեան տունեն, ինքզինքնին չխաբեն աւանդական
ժառանգի մը հետեւելու արդարացումով և արմատական դար-
ման մը խորհին տիրող մոլար ու անիմաստ կազմակերպութեան:

ԵՆՈՎՐ ԱՐՄԷՆ

ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ

Կարգ մը անտեղի տարածայնութիւններ զիս կ'տիպեն յայտարարելու թէ՛ Շնորհով
Մաղիկի յառաջաբանը իմ բացարձակ հաւանութեամբս զրուած է վէպիս մէջ:

ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆ

ԼՈՒՍՆԻ ԾԱԳՈՒՄԸ ԼԻԲԱՆԱՆԻ ՍԱՐԵՐԷՆ

Դիտած էք երբեք այն հոգեզմայլ պահը՝ ուր արեւը իր մեծաշուք կայքէն յուշիկ վար իջնալով՝ կ'ամիտօք իր օսկեճամուկ ծիրան սկաւառակը, դաշտերու, անտառներու և տիտան սարերու ուսերէն։ Դիտած էք նաեւ միեւնոյն պահուն՝ լիալուսինին ծագումն ալ, իր կուսական պայծառ ու թիւր ծիծաղներովը։ Ո՛վ գիտէ տիեզերական հզօր մեքենային լարուած առաջին օրէն՝ այս երկու մեծ լուսաւորները, քանի՜ անգամ դիտած են զիրար տկնապիշ, որոնց ձգողական սիրովը արբշիւ մարդկութիւնը՝ երբեմն բազիններ ու տաճարներ է կանգնեցնել, երկրորդելու համար մէկին կենսատու ճառագայթներուն, իբր կենդանութեան աղբ և աղբիւրը, և միւսին՝ դեղեցկութեան իբր դիցունիին՝ լուսազարդ գիշերներու։ Այս պահուն ես ալ կը դիտեմ զանոնք Լիւբանանի ցլուն ու մայրաւէտ սարերէն, որ գէմ գլխաց կանգնած՝ կը նային իրարու, ի՞նչ ալ անոյշ ու չեչտակի նայուածքով մը խորաթափանց։ Լուսինը հոս՝ պահ մը կը ժպտի իր մշտնջենի մաքուր ժպտաներովը, որոնց տակաւին գույշէ նայած չեն արցունքոտ բիւրեր։ Ու անգին, արեւը՝ իր վերջին բոց բոսոր ճառագայթներովը՝ սիրազեղ գիրկընդ խաւանում մը կ'ունենայ անոր կաթնաթոյր շողերուն հետ։ Մայրամուտքի հորիզոնին վերեւ, արեւը՝ հրաշէկ գունատ մը՝ կը թաւալի հրդեհեղով իր շուրջը, ուր ամպերու զուլաներ, ծըւէն ծըւէն, նռնենիի ծաղիկներու գոյնը կ'զգենուն։ Իսկ վարը՝ ծովը, ճ՛հ, համակ ոսկեբիւրեղ մըն է, պսպղուն ու վէտվէտուն, որուն կապուսագեղ լանջքին վրայ՝ արեւը մէկ ակնթարթի մէջ՝ մարգրտայեռ մանեակներ կը հիւսէ։ Այս սրտազրու տեսարանը սակայն, հազիւ քանի մը վայրկեան միայն կը տեւէ, վաղախոյս գիշերային երազանքի մը նման։ Ու արեւը արդէն՝ իր մարմրուն ճաճանչներովը թաւալեր ընկուղեր է Միջերկրականի խաղաղ ալիքներուն ծոցը։ Լուսինը հեազհեաէ կը բարձրանայ հորիզոնի վեր, իր արծաթաթիւ վարսերուն խուրճերը տարողնաճ մշտադալար մայրիներու եւ ինկաւէտ եղեիններու վրայ։ Երկու ժամ ամբողջ կը դիտեմ զմայլելի տեսարանը՝ իմ հիւր գտնուած Սալիմա գիւղակին անտառէն։ Լուսինին տխրանուշ նայուածքէն չեմ ուզեր բաժնել իմ նայուածքս, և անոր սիրովը արբշիւ, կը մրմնջեմ հոգիս խորէն իրեն ձօնուած բանաստեղծութիւնը մեծ քերթով մը։ Դեռ անտառէն չբաժնուած, յեւ տաղտը՝ նայուածքով ակնարկ մըն ալ կը նետեմ այդ սաստաճաւառ անշէջ շապճերին, որուն ո՛վ գիտէ այս պահուս կը նային որքան սեւեւուն բիւրեր, որքան երազուն ու յափշտակուած աչքեր, մայրիկներու որքան տառուկ աչքեր։

Բնակարանս կը վերադառնամ, անտառին ստուերոտ մայրիկներուն

մէջէն , որոնք գիշերային մեղմասոյլ հովին շունչին տակ , կարծես
գլուխ գլխի տուած՝ բաներ մը կը վախճան իրարու , ու անդին՝ հսկայ
ժայռեր , լուսնի արծաթափայլ շողերուն տակ , լսին ու խորհրդաւոր
քուն մը քնանալ կը թուին : Գիշերուան լուսթիւնը այս պահուն , մե-
նաստանի մը լուսթեան պէս փհհաղղեցիկ է , բայց հոս Լիբանանի սա-
րերում , գիշերներն այ երբ ու ձայն ունին : Փայռերու սիրտերէն
ցալտող խոխոջանքը զուլալ աղբերակներու , ծործորներու ծոցէն գիլ
գիլ հոսող քաղցրակարկաչ առուակները , անդին ճանչող ճպտուններու
ձայնները՝ տեսակ մը գիշերային համերգութիւն կազմած օրերգեր կը
հիւսեն բնութեան ամէնէն խաղաղ քունը քնացող դիւղակին համար :
Հանդիպակաց լեռնահովիտէն աւաչի մը դօրիկ ու հնչեղ ձայնը կ'առնեմ
և պահ մըն ալ զայն մօտիկ կ'ընեմ : Զայնը հովիւի մը ձայնն է , որ
առողջ ու պողպատէ կուրծքէ մը դուրս կը պոթթկայ , մօտակայ սա-
րերուն յորդառատ հեղեղներուն պէս : Ան իր սրինգը մէկ կողմ է
նստի և սիրտին սիրոյ սրինգն է որ կը հնչեցնէ , որուն երգը՝ աւաչէ
մը աւելի անմեղ սիրով մը տառապող հոգիի մը հառաչքն է , որ դիւ-
շերային լուսթեան մէջ կ'արձագանգէ լեռնէ լեռ , սարէ սար : Անոր
ձայնը մերթ մեղմ է սրինգի մը պէս , մերթ գոռ ու որոտ չիփօրի մը
պէս ու դալարուն , և որուն շեշտերը արաբական եղանակներու անուշ
մեղամաղձութիւնը ունին իրենց մէջ : Լիբանանի գեղանի սարերէն լու-
սիւի ծաղու մը և գիշերուան տպաւորիչ յիշատակը , անմոռաց էջերը
պիտի ըլլան ճամբորդի կեանքին :

ՆԵՐՍԷՍ ՎԱՐԴ. ԴԱՆԻԷԼԵԱՆ

Ա Ղ Օ Թ Ք

Երազի՛ գուտան , բիբերով բոցէ ,
Մի՛ կապկածիր որ քեւերուս անյուր
Շաղապատումը մարմինդ կը խոցէ :

Գերեղկայի՛ն կին , ծաղիկ ձիւնաբոյր ,
Աչքերուդ ներքին գոյգ բաժակներէն
Նայուածքիդ զգաւող ցօղը կ'արեցնուր :

Քեզ սիրող բերքով՛ իր սիրտին խորէն ,
Կ'աղերեւէ բեզի , անթե՛ւ գուարբուն .
Ալիքներ դրէ՛ շունչիդ բոյրերէն ,

Կարիլ մը հեռանմ , ամբողջ քրքումը ,
Եի՛ր մը վաշխայանմ , ու բոյլ մը համբոյր , —
Իմ հիւանդութեան գաղտնիքն ունիս դուն :

Զգայական խօս շենդին անճանաւոր՝
Տնեցալէ յոգնած՝ տեղի շամ գուցէ .
Յզնուելուդ վախճ. ա՛հ , անհեռացնուր :

Երազի՛ գուտան , բիբերով բոցէ ,
Մի՛ կապկածիր որ քեւերուս անյուր
Շաղապատումը մարմինդ կը խոցէ :

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍՍՄԵԱՆ

Ի Զ Ա Ֆ Է Ն

Իրիկունը թէև անհատի ուշ չէ, բայց, քաղաքին վրայ տարածուող՝ զիչերին թափանցիկ, բարակ քօղը երթալով կը թանձրանայ : Ամէն կողմ հանգարտութիւն և խօժը լռութիւն : Իզաֆէն առաջացաւ, կեցող՝ իր խնկահոտ շունչը լռենելով, զիտեց բարձրագէշ նոճիներուն գաղաթը և մտիկ բրաւ անոնց արտօնը ողբը : Երկինքի վրայ՝ անհամար ոսկեղէն լուսաւորներ կը կայծկլտան : Ֆէպէի [*] ցոլքերը ծիւռնուա լիճին երեսը կ'ալեծփին : Չա՛յն ձիւն, ո՛չ մէկ կողմ պզտիկ չարժում մը իսկ չկայ, լինութիւնը կը խոկա՛յ : Իզաֆէն՝ առանց աղմուկի մէկդի բրաւ մատաղ եղէգները և երբ, ջուրին եղերքը, Ֆէպէի լուսաշողը վրան ճառագայթիկ սկսաւ, ռաքերէն վար սահեցուց երկնադոյն չղարչը, որ իր խնկելի մերկութիւնը կը սքօղէր : Վեր բարձրացուց ձիւնաթոյր լազուկները, ուղղեց մենաւոր լուսաւորին և ըսաւ.

— Ո՛վ Ֆէպէ, դուն որ ատենով Սէրիս վկան եղած ես, հիմա կու գամ հո՛ս վերջին անգամ մըն ալ աչքերս զամելով վրադ, անցեալին նուիրական գաղանիքս քեզմէ քամել : Չուղեցի մեռնիլ առանց հոս գալու և քեզմէ այս գերադոյն հրամեշտը առնելու . . .

— Իզաֆէ՛ն .

Չայնեց անմահութ մը անոր ուսէն լռենելով : Իզաֆէն կանալի վրայ ինկաւ, զինքը պաշտողներէն՝ Քսիֆլօսի բազուկներուն վրայ : Քսիֆլօս անոր շրթունքներուն համբոյրներ դրոշմեց :

— Իզաֆէ՛ն, ըսէ՛ ինձի, ինչո՞ւ կ'ուզես անձնասպան ըլլալ :

Իզաֆէն ճանչնալով Քսիֆլօսի ձայնը, ըսաւ .

— Ա՛հ, դո՛ւն ես Քսիֆլօս :

— Այո՛, ես եմ, կը սիրեմ քեզ :

— Աղէ՛կ, բայց ո՛ւրկէ ուր հոս ես :

— Ասկէ բաւական ատեն առաջ դուն ինձի բոխր թէ եթէ Մէնէտիուս, սիրահարդ մեռնի, հո՛ս՝ սիրահարներու լիճը պիտի գաս անձնասպան ըլլալու համար . . . Մէնէտիուս մեռաւ, երկու որ կ'ընէ . . . ասո՛ր համար ես հո՛ս եկայ . . . ա՛հ, ներէ՛, Իզաֆէն, ներէ՛, որովհետեւ . . . կը սիրե՛մ քեզ . . .

— Խնդրեմ լռէ՛ և հեռացի՛ր :

— Առանձին եմք :

Քսիֆլօս զայն իր թեւերուն մէջ առաւ, — ա՛յնպէս ինչպէս վայրի կենդանի մը իր որսը կ'ուսենայ իր ճիրաններուն մէջ, — թառած Իզաֆէնի վրայ, որուն յուզումը կ'արգիլէր ընդդիմութիւն ցոյց տալ :

[*] Ֆէպէ կամ Տիանա, Արամազդի աղջիկը, որ անտոռներու ղիցուհին է :

Իզաֆէնի հարուստ , պոռթկացող կուրծքէն եթերացող զգլխիչ բոյրը
կը գինովցնէր Քսիֆլօսը :

— Քեզ չպիտի թողու՞մ , կը մրմնջէր Քսիֆլօս , մինչև որ երգում
ընես թէ իմա , միմիայն իմա պիտի ըլլա՞ս ալ , հիմա որ չես կրնար
ուրիշինը ըլլալ . . .

— Ես Մէնէտիուսի՛ խոստացած եմ թէ՛ ինք միակ Սերս պիտի
ըլլայ :

— Բայց ան մեռա՛ծ է :

— Մեռա՛ծ . . . բայց ո՛չ ինծի համար : Անոր անունը , անոր յի-
շատակը հո՛ս՝ սիրտի՛ս մէջ քանդակուած , դրոշմուած է . տակաւին կը
սիրեմ զինքը , այս սէ՛րը յաւիտենակա՛ն է . . . ան չէ՛ մեռած ինծի
համար , որովհետեւ ես զինքը այս լիճին խորը կրնամ վերստին գտնել :

— Լսէ՛ իզաֆէն . . . դուն խիստ գեղեցիկ եւ երիտասարդ ես՝
որպէս զի ներուի քեզ մահը ջատագովել : Կեանքը՝ սիրելու համար
չէ՞ եղած :

— Այո՛ , կեանքը ստեղծուած է սիրելու համար՝ բայց սիրաւ միայն
մեկ հոգիի հաւնար կրնայ բարախել :

— Ա՛հ , դուն խիստ առաքինի՛ . . . եղեր ես :

— Ես երբեք թեթեւ աղջիկ մը եղած չեմ . . . սիրեցի մէկը , որ
մեռած է հիմա , ըսել է ամէն բան լմնցած է ինծի համար . ալ աչ-
խարհի վրայ չեմ կրնար ապրիլ , թո՛ղ զիս :

— Ո՛հ , ըսաւ , դուրգուրանքով զայն իր կուրծքին վրայ սեղ-
մելով :

— Կը աեմեհս որ զիս չե՛ս սիրեր :

Քսիֆլօս անմիջապէս թողուց . ոտքի ելաւ եւ երկնագոյն շղարշը,
զոր Իզաֆէն ոտքերուն վրայէն վար սահեցուցած էր , անոր ուսերուն
վրայ տուաւ :

— Հիմա պէտք է որ իրարու հրաժեշտ տանք Քսիֆլօս :

— Քեզ չեմ կրնար թողուլ , Իզաֆէն , ես քեզ կը պաշտեմ , այս
գիշեր խիստ գեղեցիկ կ'երեւաս . ֆէպէի տժգոյն լուսաշողը դէմքիդ
հրապուրիչ մեղամաղձոտութիւն մը տուած է : Գեղեցկութիւնդ զիս կը
գինովցնէ . . . պիտի նուագիմ :

Իզաֆէն քիչ մը ատեն լուռ կենալէ ետքը՝ տխրահնչիւն ձայնով մը
ըսաւ . — . . . Ընկերացիր ինծի :

. . . Երկուքը , գրեթէ զիրար դրկած , գիշերին տժգոյն լոյսէն
առաջնորդուեցան ու մտան քաղաք : Տամուկ գետիւնը կը շոյէր կ'անց-
նէր ձամբուն վրայ գտնուող մատաղ կաղամախներուն եւ մեռելի
լուծիւն ծորող գիւղին վրայէն : Հեռուէն կը լսուէր աքլորի մը ձայնը՝
որ արշալոյսը կ'աւետէր . ուրիշ մը որ առաջինին կը պատասխանէր ,
յետոյ ուրիշ մըն ալ . . . Իզաֆէն եւ Քսիֆլօս միայն այն ատեն տուն

հասան , երբ արդէն քաղաքը արթնցած , ոգեւորութեան սկսած էր : Իզաֆէնի տունը չըջապատուած էր սլարտէզէ մը՝ ուր անադին թիւով ձիթենիներ և սրթատունկեր կային : Քսիֆիլոս հիացաւ իր սիրուհիին սրաշտելի գեղեցկութեանը վրայ և նոյն իսկ ըսաւ անոր թէ՝ Վէնիսէն ալ գեղեցիկ է : Քսիֆիլոս գլուխը հանգչեցուց անոր կուրծքին վրայ : Բայց Իզաֆէն լո՛ււ է և շատ մտածկոտ . իր խոշոր սեւ թաւիչ աչքերը կ'ըսես հիմա կը մարին . . . Բլուրին կողէն արեւը յամբօրէն վեր կ'ելլէ . . . և զիշերին ցօղէն խոնաւցած գետիններէն շոգիներու ամպիկներ ծրարուած վեր կը բարձրացնէ : Քիչ անդին՝ սիրահարներու լիճին մօտ , մահասարսուռ , սեւ բարձրաբերձ նոճիներուն վրայ թաւած բուերուն ողբերգը կ'սկսի խնկահոտ բնութեան առտուան այս հանդարտութիւնը խռովել : Իզաֆէն և Քսիֆիլոս սլարտէզ իջան :

— Մտիկ ըրէ՛ Քսիֆիլոս :

— Ի՞նչ կայ Իզաֆէն :

— Կը լսե՛ս բուերուն խռովիչ երգը :

— Մեղի՞ ինչ . չէ՞ որ մենք զիրար կը սիրենք :

— Օ՛հ , Քսիֆիլոս , ասիկա խիստ չարաշուք , մահադոյժ բան մըն է . բամբուլի՛նք իրարմէ :

— Իզաֆէն , կը գտէ՛ Քսիֆիլոս , դայն ուժով մը սիրտին վրայ սեղմելով :

— Տակաւին տտեն է , բամբուլի՛նք :

— Թող մա՛հը մեզ բամբէ :

. . . Գիշերը վրայ հասաւ , երկինքին կոմարին վրայ ոչ մէկ լուսաւոր կը փայլէր . հեռուն բուերը իրենց մահերգը կ'ոռնային : Քսիֆիլոս ըսաւ .

— Իզաֆէն , սենեակ քաշուինք , հանգստանանք :

Քսիֆիլոս վերջին համոյր մըն ալ զըռնեց անոր բոսոր չըթունքներուն և քնացաւ :

. . . Իզաֆէն բոսոր գիշերը անհանդարտ , խռովայոյզ վիճակ մը ունեցաւ :

Երազին մէջ Մէնէտիուս զինքը կը հալածէր : Արթնցաւ . . . ազանջ զրաւ իր սիրտին դարկին , որ սալին վրան՝ ծեծուող երկաթի կտորին տրուած հարուածներուն չափ ուժգին էր : Քսիֆիլոս խոր քունի մէջ , կը խորթար : Իզաֆէն կամայորակ մը ելաւ , սլատերը շօշափելով խաւարին մէջ առաջացաւ . . . Քիչ յետոյ եկաւ Քսիֆիլոսի քով . ձեռքովը շօշափեց անոր կուրծքը և դաշինի հարուած մը իջեցուց սիրտին : Այն ատեն միայն բուերը իրենց տխուր նուագը դադրեցուցին : Իզաֆէն դուրս խոյացաւ , գնաց լիճը , ուր ոչ մէկ լուսաւոր կը ցօլար : Նզէգները կամաց մը մէկ կողմ ըրաւ և երեք տնգամ «Մէնէտիուս» հռապչելով ինքզինքը լիճին մէջ նետեց ճիշդ ա՛յն տեղէն , ուր Քսիֆիլոս զինքը յափշտակած էր :

Ասանկ մեռաւ Իզաֆէն , իր ճշմարիտ սիրահարին անարգուած յիշատակին վրէժը լուծելէ ետքը :

CHOERILUS

Թարգմ. ՕՐ. Ն. ԱՐԻԼԵԱՆ

ՔԱՌՄԷՆ ՍԻԼՎԱ

Բ.

Այնչափ յիշատակներու մէջէն, զորս պահած եմ այդ Սինաիաի դղեակէն, ամէնէն սիրուններէն, միտքս կուգան անտառին նեղ ճամբաներուն մէջ անտուան պտոյտները։ Ատոնք այն վայրկեաններէն էին, ուր ներելի էր քիչ մը երկարօրէն խօսիլ Թագուհիին հետ Սինաիաի մէջ, որ անշուք երկիրին մէջ ապարանք մըն է, կարպաժեաններու վրայ շատ բարձր տեղ մը կառուցուած, արքունական կեանքը աւելի պարզ էր քան Պուքրէշի փառաշուք պալատին մէջ. և այդ պտոյտները զրեթէ ընտանեկան երեոյթ մը կ'առնէին, — այնչափ Ռուսմանիոյ Թագաւորը և Թագուհին չնորձալից վարձուք մը կը ցուցնէին։ Ժամը իննին մօտ կ'ելլէինք սովորաբար, սեպտեմբերի վերջերուն, անտուան զոլարթ արեւին Բարապան մը կուգար դուռս կը զարնէր և կ'ըսէր ինծի, իր ուսմանական հնչումովը. «Ն. Վեհափառութիւնը դուրս պիտի ելլէ և կը խնդրէ որ վար իջնէք, պարոն նաւապետ»։ Այն ատեն շուտ մը վար կ'իջնէի, սանդուղն ի վար վազելով, արեւելեան գորգերու թանձրութեան վրայէն, պերճագուզ գինախուրձերու շարքերուն մէջանդէն։ Վարը, դուրսը։ Գուռին առջևի սանդուղին վրայ կը գտնէի Թագուհին, ժպտուն, իր յունական գիծերով դեղեցիկ հասակը, ազատ և ուղիղ՝ ճերմակ չուխայէ եւրոպական դիւստներուն մէջ, — որովհետեւ սովորութիւնը կը պահանջէր որ ռուսական հանդերձները և երկայն քօղը դղեակին մէջ միայն կրէս Բովը կեցած և իր թեկն կրթնած է Կարոլոս Ա. Թագաւորին և Բօրթուկալի հանգուցեալ Թագուհիին մայր Հօնէնցօւլէնի Իշխանուհին, սե չրջազգեստով։ Յետոյ արքունիքէն երկու երեք աղջիկներ, հիւսա ո'չ թէ արեւելեան զգեստներով, այլ արեւմուտքի պղտորի պճնուհներու սկս հագուած, քիչ մը անգլիական, չեղոք գոյներով, — ինչ որ զանոնք բոլորովին տարբերանման կ'ընէր, այնչափ կերպարանափոխումը կատարեալ էր։ Ինչ անուշ բան էր շնչել լեռներու այն ողջ օդը։ Արեւ կը փայլէր յստակ, յստակ, Շողալից երկիրին մեծափառ լոյսն էր արդէն, հակառակ այդ ցուրտին, որ այդ այնչափ կապոյտ երկինքին տակ զարմանք կը պատճառէր։ Խոտին և մամուռին վրայ կը փայլէին սառած կալիսկներ, ճերմակ եղեալի պղտորի բլրերէն։ Ու կը մեկնէինք, աւազուտ ճամբաներէ, որոնք անմիջապէս անտառին մէջ կը խորանուզուէին, վիթխարի եղեկներու տակ։ Թագուհին՝ ուրախ, խաղաղ կ'երեւար Դէմքը՝ ինչպէս միշտ՝ կը պահէր իր հանդարտ թարմութիւնը, և սակայն արդէն չորս հինգ ժամ աշխատած կ'ըլլար, դեռ չլուսցած՝ դղեակին մէջ ամէնէն առաջ ինք ելած։ Միակ կանթիւղով մը, չքեղ կահաւորութեամբ պղտորի առանձնարանի մը մէջ մեկու-

սացած, պզտիկ ուշտարակի մը մէջտեղը, իր օրական աշխատութիւնը կատարած էր արշէն, նամակներ շարադրած, հրամամաններ տուած, իր աղւոր, համարձակ գիրով շատ մը երեսներ լեցուցած, որպէս զի ետքէն ազատ ըլլայ իր աղջիկներովը և իր հիւրերովը զբաղելու, և ինքզինքը ամբողջապէս նուիրէ օրուան ընդունելութիւններու, երաժշտութեան, խօսակցութեան և խաղերու։ Դժեակէն քիչ մը հեռու, բացաստանի մը մէջ, որսական տուն մը կայ, տարօրինակ, շատ հին գոթական ոճով, արջի մուշտակներով, ցլավայրիի եղջիւրներով, վարազի և եղնիկի գլուխներով լեցուած։ Թագուհին ունի նաեւ շատ խորհրդաւոր ու մենաւոր աշխատութեան սենեակ մը։ Ամբողջ բնակարանը կը յիշեցնէ Անսառնի մեջ Բնացող Գեղողիկին մէկ շալիս, որ Միջին Դարէն ի վեր մնացած ըլլայ այդ եղեխներուն հովանիին տակ։ Ամէն առտու հոն կը հաւաքուէին ամէնքը, ցորեկուան ճաշին դղեակ մտնելէ և հագուելէ առաջ, Հոն կը գտնուէին, ուրիշ ճամբէ մը գալով, Թագուհին պատուակալ տիկիները և աղջիկները, որոնք անտառին մէջ եղած պտոյտին չէին հետեւած։ Հոն էր որ առաջին անգամ Թագուհին կարգաց մեզ մէկը այն Նորապէսներէն, որոնց տակ ԲԱՌՄԷՆ ՍԻԼՎԱ կ'ստորագրէ։ Երկիւղած լուծիւն մը կը տիրէր անմիջապէս, երբ իր ձայնին երաժշտութիւնը սկսէր հնչել։ Սրտառուչ պզտիկ պատմութիւն մըն էր, վիպական հազուագիւտ զօրութիւնով մը գրուած, և դեռ կը յիշեմ թէ՛ ինչ սարսուռներ ունեցայ, իրեն ականջ դրած միջոցիս...

Բայց այս հապճեպով գրուած նօթերուն մէջ անտեղի է իր գրագետի տաղանդին վրայ խօսիլ։ Դաշիլ իսկ չեմ ուզեր այդ նիւթին, զոր այլապէս լուրջ կերպով մը երկար գլուխներու մէջ պէտք է բացատրել։ Եթէ այդ ընթերցումին խօսքը ըրի, պարզապէս միտքս մնացած չնչին մանրագէտ մը պատմելու համար էր։ Սկսելէ առաջ, Թագուհին ուզած էր ձեռք առնել իր ականցը, որ իր պարզ իրանազգեստին վրայ ձարմանդուած էր այն ահագին աղամանդներէն մէկուն, որուն նման Թագուհիները ունին միայն իր աղջիկները, որոնք զինքը կը շրջապատէին, բողոքեցին ըսելով. «Ո՛չ, Ձեր Վեհափառութեան չվայրեր ատիկա։ Ձեռք ուղեր որ Ձեր Վեհափառութիւնը իր աչքերը ծածկէ, շատ մեղք է»։ Անոնցմէ մէկը մանաւանդ՝ որ անոր քովը կեցած, չփայցած տղու ձեւեր կ'ընէր, յայտնի կերպով ընդդիմացած էր այդ բանին, և Թագուհին ժպտելով հնազանդած էր։ Բայց քանի մը էջ կարդալէ հետք, աչքերը քիչ մը մթնցած, ծաղկատի աղջկան դառնալով աղաչաւոր ժպիտով մը ըսաւ. «Մ'հ, բայց... աչքերս շատ կը յոգնին...»։ Այս մէկ քանի բառերը՝ զորս Թագուհի մը այդ չեղտով կ'արտասանէր, պաշտելի բան մը երեւցան ինծի։ Ամէն կողմէ մեզ շրջապատող բարձրաբերձ եղեխները կապտորակ կէս մթութիւն մը կը ծաւալէին մեր գտնուած սրահին ջլանաւոր փայտադրուածքներուն վրայ։ Զուրի կտրկաջ մը Թագուհին ձայ-

նին կը խառնուէր . առուակ մըն էր՝ որ լեռներու կատարներէն իջնկ-
 լով , որսակա տունին քովէն կ'անցնէր : Սակայն ես ա'յնչափ մօտ էի
 Թաղուհիին որ՝ կարգացածին կրնայի հետեիլ , և մեծ եղաւ զարմանքս՝
 երբ տեսայ թէ՝ ինչ որ Փրանսերէն կը կարգար գերմաներէն գրուած
 էր : Անկարելի էր դուշակել այդ բանը , որովհետեւ իր սիրուն ընթերցա-
 նութեան մէջ վարանում չկար բնաւ . նոյն իսկ իր առանց պատրաս-
 տութեան յօրինած պարբերութիւնները ներդաշնակ էին միշտ : Անգամ
 մը միայն կանգ առաւ , բառ մը փնտռելով որ միտքը չէր գար , —
 տունկի մը անուն , որուն ֆրանսերէնը չէր յիշեր : «Օ՛հ ... ըսաւ , աչքը
 ձեզունին վրայ պտտցնելով . և անհամբերութենէն ոտքը սկսաւ մեղմօ-
 րէն գետինը զարնել , ինչպէս կ'ընէ մարդ , երբ բան մը փնտռէ : Յետոյ
 յանկարծ , իր մօտը նստող աղջկան թեւը թօթուելով , ըսաւ . «Ինչ
 կ'սպասես , չգտնաս սա բառը , կունտ-գլո'ւս» : Իր ձայնը և իր
 հրապոյրը պէտք էր , որպէս զի այս չափազանց ընտանի խօսքը ,
 որ ուրիշի մը բերանը գռեհիկ պիտի թուէր , գերանշանցօրէն
 աղնուաշնորհ եւ գերազանցօրէն անուշ բան մը ունենար , — անանկ
 անակնկալ և անանկ զարմանալի բան մը՝ որ ամէնքնին ալ
 խնդալ սկսանք . . . Եւ սակայն ճիշդ իր ընթերցումին այն
 միջոցներէն մէկն էր , ուր արցունքով կը լեցուէին մեր աչքերը , ամ-
 փոփուած միտքով մօտիկ ըրած ատեննիս : Քառմէն Սիլվա միակ անձն
 է որ իր զօրները կարգալով յաջողած է արտասանութիւնովը լացնելու
 չափ յուզել զիս , և ասիկա ամէնէն մեծ գովեստն է՝ զոր իր տաղան-
 դին համար կտրենամ ընել , որովհետեւ նոյն իսկ թատրոնը , ուր ա'յն-
 չափ մարդիկ կը խանդավառուին , ինծի տառնկ բան մը չպատահիր
 երբեք : Անգամ մը լսեցի որ նոյն ճարտարութիւնը կը յայտնէր ուռ-
 մանական լեզուով թարգմանութեան մը մէջ : Լեռնային հին պարերգ
 մը կը կարգար , և , գիրքին վրայէն կշռաւոր ֆրանսերէնի մը կը
 թարգմանէր , որ կարծես թէ բանաստեղծութիւնն էր : Կ'երեւայ թէ
 իրեն համար որ և է լեզու անտարբեր միջոց մըն է իր մտածումը ար-
 տայայտելու : Այս մասին ինք ալ այն քաջարուեստ նուագածուններուն
 պէս է , որոնք կտոր մը այս ինչ կամ այն ինչ ձայնի աստիճանով կը
 նուագեն , նոյնչափ գիւրութիւնով և զգացումի նո'յնչափ ներութու-
 թիւնով : [վերջ]

ՍԱՆԹԱ ԼՈՒԶԻԱ

«Il mare Lucica
«L'astro argento . . .»

Ծովն է պայծառ , ջրն՝ յուսնկայ .
Վերն երկինքն է յուսածորան ,
Յարածփուն ջուրին վրայ՝
Կը քեւածէ՝ արծարածայն

Սանժա Լուչիա՛ , Սանժա Լուչիա՛ :

Ունայն խորհուրդն համբոյրներուն
Մինչեւ առաւ պիտի դողայ
Շրթունքներու վրայ՝ ձգայն՝
Սիրամուս՛գ ալիւիս ,

Սանժա Լուչիա՛ , Սանժա Լուչիա՛ :

Մանուկինան՝ ձեռքիդ ներքին
Դգուանքին թակ կը հեծկլայ ,
Նաւերգները լիալուսնին
Աճողոգս քիանխիմա՛ . . .

Սանժա Լուչիա՛ , Սանժա Լուչիա՛ :

Շրթունքներդ համբոյր կ'ուզեն ,
Մինչ նայուածդ՝ հրա՛գ անհուն ,
Կը գգուէ հովը քափառելէն
Թափուն կի՛րքը քու աչքերուն ,

Սանժա Լուչիա՛ , Սանժա Լուչիա՛ :

Ու Դուն , հոգի՛ս , ինձ կը քուիս ,
Ալիքներուն ծընած մէջէն ,
Ազուր պարիկը երազիս
Շրթամարմին ու լուսեղէն ,

Սանժա Լուչիա՛ , Սանժա Լուչիա՛ :

Ու նաւը միտս կը հեռանայ
Ծովերուն բա՛ցը ամայի ,
Ալիքներն ալ յուսածայ՝
Կը կրկենն եզրդ ճենչալի՛

Սանժա Լուչիա՛ , Սանժա Լուչիա՛ :

ՀՐԱՆՏ ՆԱԶԱՐԵԱՆ

ՀԼԱՏԸ

Գ.

Զօնազան մտածումներու անձնատուր , Արաէն , բայց պատուհանին առջեւ , իր դիմացը , հեռուն պարզուած հիանալի տեսարանը կը դիտէր անձկալից ու արում , — ծովի լայն պատար մը՝ որուն վրայ «վերջալոյսի ոսկեհուն չղարչ մը» փռուած էր շողշողուն , — երբ Արամ երեւցաւ : Ո՛րչափ սպասած էր անոր : Եւ երկտառարդը ծաւերու թաւ ոտներուն ձեւացուցած վրանին մէկ բացուածքէն սկսաւ դիտել իր բարեկամին զօնունակ երեւոյթով մը մօտենալը : Ամէն ատենուան պէս վայելուչ էր ան , Pygmalion փալիսոն օձիքէն — զոր à la Le Bargy հանգոյցով հոյակապ plastron փողկապ մը կը զարդարէր — մինչեւ նուրբ կլասէ կոշիկները : Աջ ձեռքին մէջ ոսկեկոթ և եղէգէ ձկուն դաւազան մը անհող ձօճումներ կը շրջադէժէր , մինչ ձախը անխուսափելիօրէն կը կրէր խել մը լրագիրներու հետ՝ կակուզ peau de Suède ձեւանոցները : Վայրկեան մըն ալ և ահա արդէն փողոցն են անոնք — երկու սրտակից բարեկամները : Ու կը հեռանան , չափաւոր արագութեամբ զնայքով մը , այն նեղ ծառուղիին մէջէն՝ որ մաքուր և ուղղաձիգ գիծով մը կ'երկարի Արաէնին պարտէզին մէկ ծայրէն սկսելով մինչև ծովեզերք : Իրիկունը զմայլելի է : Ամբողջերջի գազլ և անդորրաւէտ պահ մը . մօտակայ պարտէզէ մը՝ յամենցող վարդի և յամիկի բոյրեր որոնք օղը կը խնկեն , և այդ լռանիտ , անհուն հանգարտութեամբ հեշտաբոյր մթնոլորտէն , ուր հազիւ նշմարելի թրթռումներ — հողի ջերմութենէն առթուած — կը ծաւալին , Արաէնի հողին կը թռի օրօրուելի վայրկեան մը՝ անմեկնելի խաղաղութեան մը պատրանքով : Երբ իրենց առօրեայ զրազումներուն compte-rendu քանի մը բաւով իրարու հաղորդելու պայմանագրական եղանակներն — զոր բնութեան գլխածանկարին ընծայած տպաւորութիւնները պահ մը ընդմիջեր էին — վերջ գտաւ , Արամ վերստին զգացնել սկսաւ իր բարեկամին՝ անոր ապագային նկատմամբ իր անձնուէր հոգածութեան և օգտախնդրութեան սեւեռեալ գաղափարը , ըսելով .

— Դուն պէ՛տք է կեանքը վայելիս ինծի՛ պէս , ուրիշներո՛ւն պէս : Ինչի՞ կը ծառայէ անօգուտ հպարտութիւն մը , երբ զոճողութիւններդ չեն համարադատախաներ երազներուդ , իղձերուդ պսակումին : Այս դրական դարուն մէջ յաջողելու համար գործնական բոլոր պատուաւոր միջոցները ներելի ու փորձելի են , կը բաւէ որ ատենց համար ջանք ու կորով չխնայուին :

Արաէն զգաց այս բառերուն բախանդակ նշանակութիւնը , բայց չկրցաւ պատասխանել : Շարժում մը ըրաւ միայն , վարանումի և կէս-

հաւանութեան խառն վիճակ մը մատնող շարժում մը, որուն հանդէպ Արամ սկսաւ շարունակել, աւելի՛ վճռական գոյն մը տալով իր թռածիչ խօսքերուն :

— Ես քու հոգեկան կացութիւնդ կատարելապէս կ'ըմբռնեմ և կը բաղձամ որ բարեփոխուի ան . դուն ալ չե՞ս բաղձար երբ ուզած ձեռովդ համնիս առոր . . . Քեզի համար խիստ յարմար լսոյ պաշտօն մը գտայ Գ. Լ. դրամատուէրին մէջ . գիմում ելն . չպիտի ընես . գիմումը ե՛ն այսօր ըրի քու տեղդ և լինցա՛ւ : Փայլուն ամօտական , մաքուր գործ , և վաղուքնէ՛ . . .

Արաէն յուզուեով իր բարեկտմին նայեցաւ . . . Այս անգամ խուսափելը՝ ա՛լ մեծագոյն անմտութիւնը պիտի ըլլար . . .

— Խիստ շնորհակալ եմ , եղբայր . երբ կը մտածեմ թէ այս նիւթապաշտ դարուն մէջ անկեղծ և անհասանդիր մա՛րդ մը անգամ չես կրնար գտնել շուրջդ դէպի հաւան , քու անձնութեանդ պարզապէս հիացում կ'առթէ ինծի . . . կ'ընդունիմ :

Եւ երկու բարեկամները , ծովեզերեայ ֆազիկնօն ուր նստած էին , գարնջուրի գաւաթները՝ իրարու քաղխելով խմեցին այդ բացառիկ գործին յաջողութեանը :

Արաէինն՝ սեղանաւորական այդ մեծ հաստատութեան մէջ կարեւոր պաշտօնի մը կոչուելէն ի վեր երեք ամիսներ անցեր էին , և երիտասարդը , առջի օրէն , մեծ հաճոյքով փորհր էր իր գործին , իր պետութեան ուշադրութիւնը գրաւելով և անոնց գնահատութիւն արժանանալով այդ կարճ ժամանակամիջոցին մէջ : Իր ճշգրտագնութիւնը , խնամուած աշխատութիւնը ու իրական արժանիքը ամէն յոյս կը ներշնչէին թէ քիչ ատենէն բարձր պաշտօններու պիտի տիրանար տն՝ անկասկած : Երիտասարդը գո՛հ էր հիմա՛ իր հոգեկան վիճակին — ու նիւթականի՛ն ալ — մէջը տեղի ունեցած անտկնկալ բարեշրջումի նշաններուն ու փուլերուն իրերայաջորդութենէն : Հակադրեցութիւնը ու ժգին էր եղած : Ու բա՛ւ չէր գտներ՝ Արամին վեհանձնութիւնը և անձնութեանը թիւնը յատկանշելու համար : Կ'ըզար թէ միմիայն անոր կը պարտէր իր յաջողութիւնը , թէ անոր ելեքորացնող խօսքերուն ու չարանակական խորհուրդներուն շնորհիւ՝ թելադրական հոգեբուժութիւն մը կատարուեր էր իր ներսը և փրկուեր : Որովհետեւ ինք ի՛նչ օգուտ տեսեր էր իր-տաղանդէն , իր անուրանալի հմտութենէն , երբ զանոնք արժեցնելու կարողութիւնը չէր ունեցած : Արամ միջոցը ընծայած էր իրեն , քաջալերած , ամբապնդած էր ղինքը , և ահա՛ այդ բարոյական ու ժգին բարդին (pile) ցնցումնաւոր հաղորդականութիւնն էր որ ղինքը սթափեցուցած էր վերջապէս իր երկարատեւ թմրութենէն : Օրերով յիշեց այս պատահարը և մտածեց : Եւ խռովիչ քունէ մը ընդոտաւ արթնցողի մը պէս՝ իր աչքին առջև սկսան պատկերանալ հետզհետէ՝

անցեալին բոլոր յիշատակները և իր՝ իրր աշխարհիկ մարդ ունեցած անճարակութիւնները ևւ տուայտանքները : Այս բոլոր անցքերուն մէջ իր ազրեւու նոր ու գոհացուցիչ պայմաններէն հաքը՝ ապահովարար իրր ամէնէն ուշագրաւ ու հետաքրքրական դրուագ՝ գտաւ իր բարձրօնէն բաժանուիք : որ սրճայոյզ (՝) պարագաներու տակ տեղի ունեցիր էր , այդ շահադէտ մարդուկին , վերջին ժամուն , զինքը համոզելով վար դնելու և քանի մը տարի՝ ալ անխղճօրէն շահագործելու միտքով ըրած աա՝ սուտ խոստումին առիթով :

— Արսէն , օ՛ղորաւ , զիս ձգելով ո՛ր կ'երթտա . . . ևս դո՛ւ եմ քննէ . . . տարեգլուխին ամսականիդ վրայ յաւելում մը պիտի ընէի (???) . . . առ կ'ըլլա՞յ մի եաւ . . .

Հայ չորպանիներու ճգնաժամական այս ծանօթ յանկերգը ո՛վ չէ լսած : Խնդիրը ան է որ , Արսէն , հակառակ իր միտքը զրատը բոլոր սիրական յուշերուն մէջ օրօրուելու բաղձանքին , միշտ տպաւորուած կը մնար իրեն համար սամիկ և անհրապոյր այս անցքէն : Որովհետեւ բաւական շահեկան շրջան մըն էր եղած Ռուբէն աղային — Հայ կծծի չորպանիի այդ հաւատարիմ տիպարին — հետ անցուցած երկարատեւ ժամանակամիջոցը : Այս մարդը չարաչար կերպով շահագործած էր իր պաշտօնեային ո՛չ միայն արժանիքը և բազմակողմանի հատելիւնը , այլ նաև անոր տկարութիւնները : Երիտասարդին կարողութիւններն ալ , անկարողութիւններն ալ որոնք իր գործին շատ աղէկ ու շատ յարմար կուգային , հաւասարապէս նպաստած էին իր գործին : Իր ճաշակին համաձայն վնասուած ու գտած որսն էր Արսէնը , Ռուբէն աղան , հակառակ իր banal դրսերեւոյթին և իմաստասիրական խնդիրներէ բա՛ն մը չհասկնալուն , հոգեքաճական վայրկեաններե օգտուելու մեծ փորձառութիւնը ունէր — արդէն ո՛ր Հայ չորպանին զուրկ է այս հաղուագիւտ առաքինութիւնէն — և իր այս թանկագին յատկութեան շնորհիւ յաջողած էր Արսէնը . . . անօթի պահելով մինա՛կ ինքզինքը կշտացնել : Փորի մօլեւանդ պաշտամունքին , սակայն , վերջապէս անխուսափելի էր որ յաջորդէր . . . ստամոքսի անտանելի խիթը : Այդպէս ալ եղաւ : — Յուալին ան է որ , Արսէն , իր հպարտութիւնը չէր կրցած իրր յաջողութեան ազդակ մը ծառայեցնել իրեն : Ընդհակառակը , իր այդ ազնիւ զգացումը — այսօրինակ պարագաներու մէջ վիճելի — իր վարանու մներուն հետ , աւելի իր դժբախտութեանը պատճառ եղած էր , իր կամքին հակառակ : Եւ եթէ վերջին պահուն , Արամը վրայ հասնելով ճարտարութեամբ շարժած չըլլար , Արսէն անտարակոյս պիտի կորսուէր . . .

ՊՈԼԵՍԻ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻՆ ԻՅԵՐԱՆԱՆՍԻԹԻՆԷԸ

Նկատելով որ արեւմուտքի գրողէաներուն գրած լեզուն իր ամբողջութեանը մէջ Պոլիսի աշխարհարարն է, որ սակայն, տակաւին շատերու կողմէ կը գրուի անհիշողութեամբ անհարազատ կերպերով, մենք մեր ներկայ յօդուածին նիւթ պիտի ընենք, միայն անհիշողութեանն ու անհարազատութեանն երկուստեքն իւր միակ ուղեցոյցը և criterum ունենալով Պոլսեցի անգրագէտ ժողովուրդին խօսած լեզուն :

Ա. — Նախադրութիւնով ասացուածներ. — Օրագիրներու և զիրքերու մէջ տակաւին կը վիտան ըստ, ընդ, առ, ի, ց, նախդիրներով շինուած գրարարած և բացատրութիւններ. ինչպէս, ըստ իս, ընդ հուշ, մերք ընդ մերք, բոռ առ թառ, ծայր առ ծայր կամ ծայրէ ի ծայր, բացէ ի բաց, ի չգոյժ կամ առ ի չգոյժ, ի զուր, ցարդ ևն. ևն. Նախադրութիւնով շինուած նման ասացուածներ ալ իրենց գոյութեան իրաւունքը վերջնականապէս կորսնցուցած են Պոլիսի աշխարհարարին մէջ, ուր անոնց իւրաքանչիւրին տեղ դրուած է անւանադիր [որով հարազատ աշխարհարար] բացատրութիւններ. ինչպէս, ինծի համար, իմ կարծիքովս, ի՞նչ ասեմեմ, երբեմն երբեմն, թառը թառիմ, ծայրէ ծայր կամ ծայրը ծայրիմ [իմաստին համեմատ], բացէ բաց, չը գտնուելու կամ չը գտնուելու համար, պարապ օեղը, միևնչեւ հիմա, ևն. ևն. :

Ալ այսօրուան աշխարհարարին մէջ, որ և է բաշքուր արդարացումով նախդիրաւոր բացատրութիւններ գործածելը սխալ, բացարձակ սխալ է ուրեմն, իւրաքանչիւր նախդիրաւոր գրարարած և ասացուածի տեղ պէտք է ժողովուրդին յարմարացուցած անւանադիր [հարազատ աշխարհարար] բացատրութիւնը գտնուի և գործածել :

Իրտեղի է տակայն որ՝ դեպ ի և ի վեր գրարարած նախադրութիւնները աշխարհարարի մէջ ընդունուած են, բայց ձև փոխելով և ըլլալով դեպի և իմեր, [միտման գրուած] : Իրարարի ձևով ի ին անշատ

գրուելը աշխարհարարի մէջ արդարացում չի պիտի ունենար :

Բ. — Անուններու հորովումը. — Դրողներու մեծամասնութեան գրիչին տակ նախդիրաւոր գրարարած և խորթ ասացուածներու չափ առատ են նաև հոլովումի անհիշողութիւնները : Աշխարհարարի մէջ հոլովումի ձևը երկուք է. I. կանոնաւոր և II. անկանոն : Հոլովումի կանոնաւոր ձևը կը ձևացունէ հոլովումի ընդհանուր կանոնը : Հոլովումի անկանոն ձևերը կը կազմեն ընդհանուր կանոնին բացառութիւնները :

I. Հոլովումի կանոնաւոր ձևը կամ ընդհանուր կանոնն է. եզակի ուղղականը և հայցականը անփոփոխ, սեռականը և տրականը ի. բացառականը է, գործիականը ով վերջաւորութիւններով : Յոքնակի ուղղականը և հայց. եր, բաց. երէ, գործ. երով վերջաւորութիւններով : Օրինակ. — եզ. ուղղ-հայց. զիրք, սեռ-տր. զիրքի, բաց. զիրքէ. գործ. զիրքով : Յօք. ուղղ հայց. զիրքեր, սեռ-տր. զիրքերու, բաց. զիրքերէ, գործ. զիրքերով : Իհնոյ. Հոլովումի այս ընդհանուր ձևին հետեւող բառերէն մէկ բանիներուն եզակի սեռական և տրականը զարտուղարար տարբեր կերպերով կ'ըլլան. ասոնք են, A. — Ուշքիւն վերջացող բառերը, որոնց եզ. սեռականը և տրականը կ'ըլլան ուշքեան և ոչ թէ ուշքիւնի : Ժողովուրդը կ'ըսէ աղւորութ(ե)անդ, մեռնիմ. խելացիութ(ե)անդ ըսելիք չի կայ, ևն. ևն. : Զ'ըսեր խելացիութ(ե)անդ, աղւորութ(ե)անդ ևն. ևն. : Ժողովուրդը ուշքիւն վերջացող բառերուն սեռականը և տրականը ի ով չէ՝ ըրեր ուրեմն և ընդունել վաւերացուցեր է ուշքեան ձևը : Եզակի սեռական և տրականէն զատ միւսները ընդհ. կանոնին կը հետեւին. օրինակ. աշխատութիւն, աշխատութեան, աշխատութիւնէ, աշխատութիւնով, աշխատութիւններ, աշխատութիւնէր, աշխատութիւններով :

2. — Եւ, ուշ, աշ, ի չ վերջացող աներկեղծներուն միայն եզակի սեռականը և տրականը կ'ըլլան ու ով. օրինակ. հագուելու, ինդալ-ինդալու, կոտրել-կոտրելու, զբօսնուլ-զբօսնելու : Միւս հոլովները ընդհ. կանոնին կը հետեւին :

3. — Նմանապէս միայն եզակի սեռականը և տրականը ուռով կ'ըլլան հայ, մարդ, մանչ, եջ, պան, դար բառերուն և մէկ թուական անականին, երբ գոյականարար զործածութիւն Սրե, արեւոյ կ'ըլլայ ըսնի մը ատույումներու մէջ. արեւոյ համար, արեւոյ սիրուն, արեւոյ մեռնիմ ելն. : Ասոնցմէ զուրս ընդհանուր կանոնին կը հետեւին արեւին ճառագայթները, արեւին լոյսը, տարածութիւնը ելն. : Տղայ կ'ըլլայ տղու կամ տղայի :

4. — Աղջիկ կ'ըլլայ աղջկան. երիկ երկան. կնիկ կնիւն. : Միւս հոլովները ընդհ. կանոնին կը հետեւին :

5. — Ատեն, օր, տարի բառերուն եզակ. սեռ. ը և տրակ. ը ընդհանուր կանոնին կը հետեւին երբ ժամանակ ցուցնեն. օրինակ. ատենին եկար, տես օրին վճարեցի, տարիին կէսը անցաւ ելն. : Անկանոն կերպով կը հոլովուին և կ'ըլլան ատենուան, օրուան, տարուան երբ ճշտողութիւն ցուցնեն. օրինակ. այդչափ ատենուան մէջ չ'ըլլար, սաչափ օրուան կամ տարուան մէջ կ'ըլլայ ելն. : Տարի կ'ըլլայ տարու երբ տարիք նշանակէ. երբ տարու է — Միւս հոլովները ընդհ. կանոնին կը հետեւին :

6. — Շաբաթ, ամիս, բառերուն եզ. սեռականը և տրականը կ'ըլլան շաբաթ, ամուս, երբ ժամանակ ցուցնեն. օրինակ. անցեալ շաբաթ պիտի գաիր ամէն ամսու սկիզբը. : Շաբաթուան ամսուան կ'ըլլան երբ ճշտողութիւն ցուցնեն. օրինակ. երկու շաբաթուան կամ ամսուան զործ կայ : Անգամ կ'ըլլայ անգամաւ կամ անգամաւան. օր. անցեալ անգամաւ կամ անգամաւան ըսածս : Դիտելի է որ հոլովումի կանոնաւոր ձևերուն մէջ ո՛չ կորուսում, ո՛չ ալ փոփոխում տեղի կ'ունենայ : Այսպէս, սենեակ կ'ըլլայ սենեակի, սենեակէն. պարտէզ՝ պարտէզի պարտէզով. բնութիւն՝ բնութիւնէ, բնութիւնով. խնդր՝ խնդրի, խնդրէ խնդրով. խորհուրդ, խորհուրդէ, խորհուրդով ելն, և ոչ թէ սենեկի, սենեկով. պարտիզի, պարտիզով, բնութիւնէ, բնութեամբ. խորհրդի, խորհրդէ. խնդրի, խնդրէ ելն. : Բացառաբար միայն՝ իշ և ուշ վերջացող աներեւոյթներուն (ի) ն և (ու) ն էի կը փոխուին.

օրինակ. հագու(ի)լ՝ հագու(ե)լու, հագու(ե)լէ, հագու(ե)լով. զրօն(ու)լ՝ զրօն(ե)լու, զրօն(ե)լէ, զրօն(ե)լով :

II. — Անկանոն ձևերով հոլովուող բառերն են .

1. Ամառ, ձմեռ, օր, առառ, իրկուն, գիշեր, ցորեկ երէկ, այսօր, վաղը, հիմակ, մահ, առաջ բառերը, որոնք կ'ըլլան եզակի ուղղ. հայց. ամառ, սեռ-տր. ամառուան, բաց. ամառաւընէ, զործ. ամառաւընով. ձմեռ վրայ. Այս բառերուն բացառականը և զործականը կանոնաւոր ձևով ալ կրնան զործածուիլ. օրինակ. անցեալ ձմեռընէ կամ ձմեռէն ի վեր. երէկ ցորեկէն կամ ցորեկուրէն, իրկուրէն իրկուրէն կամ իրկուրէն իրկուն. իրկուրէն, ձմեռով, ամառով ելն. : Զ'ըսուր սակայն վաղէն, երէկէն. հիմակէն, առաջէն, այլ միայն վաղուրէն, հիմակուրէն, երէկուրէն, առաջուրէն :

2. — Հայր, մայր, եղբայր և ատնց բարգոյթիւնները կ'ըլլան եզակի ուղղ. հայց. հայր, սեռ-տր. հօր, բաց. հօրմէ, զործ. հօրմով ձևին վրայ :

3. — Միւս, տէր, բոյր և ատոր բարգոյթիւնները կ'ըլլան բրոջ, բրոջմէ, բրոջմով, ներոջ, ներոջմէ, ներոջմով. տէրոջ, տէրոջմէ, տէրոջմով : Ընկեր բառը կ'ըլլայ թէ ընդհ. կանոնին համաձայն՝ ընկերի, ընկերէ, ընկերով և թէ անկանոն կերպով ընկերոյ, ընկերոջմէ, ընկերոջմով : Նմանապէս կեսուր, տագր, աներ բառերը Ատնց համար սակայն կանոնաւոր ձևը նախապատիւ է :

4. — Էռ, թու, կ'ըլլան թուան թուան, թունով ձևին վրայ :

5. — Աստուած կ'ըլլայ Աստուծոյ, Աստուծմէ, Աստուծով : Սէր, սիրոյ, սիրով :

6. — Ճամբայ կ'ըլլայ ճամբու, ճամբէ, ճամբով, թէ և ճամբայի, ճամբայէ, ճամբայով կանոնաւոր ձևն ալ սկսած է զործածուիլ :

Ասոնք են ահա անկանոն ձևերով հոլովուող անունները : Այդ սահմանափակ թիւով բացառութիւններէն զուրս զստուող անուններուն ամէնքն ալ, ըլլան անոնք հասարակ, յատուկ կամ տեղի անուն, կը հոլովուին ընդհանուր կանոնին համաձայն : Ինչպէս յայտնի

երեցաւ, հոլովումի անկանոնութիւնները տեղի կ'ունենան միայն եզակիի մէջ : Յորնակները միշտ կանոնաւոր ձեով կ'ըլլան : Միենակ մարդ և ջղայ բառերը, բացառաբար յորնակի կ'ըլլան թէ կանոնաւոր և թէ անկանոն ձեւերով, մարդեր, մարդերու կէն, և մարդիկ, մարդոց, մարդոցմէ մարդոցմով, Նոյնպէս տղաներ, տղաներու կէն, և տղաք, տղոց, տղոցմէ տղոցմով : Գիտելի է որ յորնակներու մէջ կարգ մը անուններ հոլովական մասնիկէն առաջ քաղցրահնչական և մը կ'առնեն, ինչպէս տղիկ, աղջիկներ, աղջիկներու կէն, : Պարզեւնէր, պարզեւնէրով, խտտումներ, խտտումներէ կէն : Ասիկա վարժումով, խօսուած լեզուն մտիկ ընելով կը սորվուի :

Անխորհուրդ. — Այսօրուան Պոլիսի աշխարհաբարը ունի հոլովումի կանոնաւոր ձեւ մը՝ որ հոլովումի ընդհանուր կանոնը կը ձեւացնէ և հոլովումի քանի մը անկանոն ձեւեր, որոնք ընդհանուր կանոնին բացառութիւնները կը կազմեն : Ընդհանուր կանոնին հետեղ բառերէն քանի մը հատին եզակի սեռականը և արականը զարտադարբար սեռականի և արականի կանոնաւոր ձեւէն տարբեր կերպով կ'ըլլան : Յորնակներու համար ընդհ. կանոնին կանոնաւոր ձեւը բացարձակ է, միայն մարդ և ջղայ բառերը թէ կանոնաւոր և թէ անկանոն ձեւերով կրնան յորնակի ըլլալ : Կարգ մը բառերու յորնակի հոլովներուն մէջ մտած քաղցրահնչական և զիրին գործածութեանը խօսուած լեզուն մտիկ ընելով կ'ընդլայնուի :

Դ. — Ժխտական մասնիկներու գործածութիւնը. — Գրուած լեզուին մէջ տիրապետող անօրինակ անմիակերպութեան զլիաւոր պատճառներէն մէկն ալ ժխտական մասնիկներուն գործածութեան կերպն է : Գրողներէն շատեր առանց որ և է ուղղութեան կամ կանոնի ժխտական մասնիկները կը գործածեն իրարու տեղ և փոփոխակի : Կան զբաղէտներ ալ որոնք մասնաւոր կանոնի մը կը հետեւին թէև, բայց այդ կանոնը հիշող չ'է, ըլլալով իրենց կամ ասկէ 40-50 տարի առաջուան քերականներուն շինածը և ոչ թէ այսօրուան Պոլսեցի ժողովուրդին գործածածը : Պոլսեցի ժողովուրդը

իր ժխտական մասնիկ կը գործածէ միմիայն չը և չի միօրինակ և անխախտ կանոնի մը համաձայն :

2. կը գործածէ .

1. — Ապառններուն հետ, պիտիկն անվշտպէս առաջ . օրինակ . չի պիտի ուտեմ, չի պիտի խօսէիք կէն . : Ժողովուրդը երբեք չ'ըսեր՝ չը պիտի ուտեմ կամ չպիտի խօսէիք կէն . : Եթէ ժխտական մասնիկը պիտի էն վերջը դնել ուղղութիւն տալն չի տեղ չը գործածելու է . օրինակ, պիտի չը խօսիմ, պիտի չը կրնայ կէն . :

2. — Միադէմ բայերուն և ստորագրականներուն ժխտական ձեւով գործածուած տառն . օրինակ գամ, գաս, գայ կէն . գայի, գայիր, գար կէն . , կ'ըլլան չի գամ, չի գաս, չի գայ կէն . , չի գայի . չի գայիր, չի գար կէն . : Նոյնպէս լամ և տամ կ'ըլլան չի լամ, չի լայի, չի տամ, չի տայի կէն . :

3. — Միադէմ բայերուն ապառնի անեւրեղծ ժխտական ձեւով գործածուած տառն . օրինակ, չի տալու, չի գալու, չի լալու :

4. — Կամ տղախաւոր բային ժխտական ձեւով գործածուած տառն . օրինակ . չի կայ, չի կար, չի կային կէն . : Այս չորս պարագաներէն դուրս մնացեալ բոլոր եղանակներուն հետ պէտք է գործածել չը . այսպէս, չը կրցաւ, չը թողուցի, չը խնդանք, չը սիրուիր կէն . : Երբ չը ին յաջորդող բայը ձայնաւորով սկսի, չը ին չը կը ջնջուի և անոր տեղ (') կը դրուի . օրինակ, չ'ունիմ (փոխանակ չը ունիմ) նոյնպէս չ'եղաւ, չ'ըլլար, չ'ըլի, չ'ըրին, չ'առնուեցաւ կէն . : Էական բային սահմանական ներկային և անկատարին ժխտական ձեւն ալ պէտք է ըլլայ ուրեմն չ'եմ, չ'ես, չ'է կէն, չ'էի, չ'էիր . չ'եր կէն . [փոխադէն չը եմ, չը ես չը է, չը էի, չը էիր, չը էիր] և ոչ թէ չեմ, չես, չէ կէն . առանց (')ի գրուած : Ասիկա միւսնոյն տառն սա օգտակարութիւնն ալ կ'ունենայ որ իրարու հետ չեն շփոթուիր չե (ոչ) ժխտական մակբայը և չ'է էական բային ժխտական եզ . Դ. դէմքը : Նախընտրելի է նաև չը ին չը զեղչելով տեղը (') դնել ամէն անգամ որ անոր յաջորդող բայը թէև բաղաձայն տառով, բայց ձայնաւոր հնչուածով կ'սկսի, ինչպէս,

զբօնուէլ, սկսիլ, զբաղիլ ելն . բայերը, որոնք կը հնչուին ըսկիւ, ըզբաղիլ, ըզբօնուէլ ելն . Այս եւ նման բայերու հետ նախադասութիւն է գրել չ'սկսիլ, չ'զբօնուէլ, չ'զբաղիլ, ելն . Այս բառերուն հետ չը մտնիկը առանց (')ի գրուած առեն պիտի կարդացուէր չը ըսկիւ, չը ըսբանչանալ, չը ըզգալ, չը ըստանալ ելն . Ինչ որ անտեղիութիւն մը պիտի առաջ բերէր : Տաւ, գաւ, շաւ միավանկ բայերուն ժխտական տաճմանական եզ . Գ . դէմքը սիսալ է գրել չի տար, չի գար, չի լար : Ասիկա թէեւ արատաբերութեան տեսակէտով ճիշդ է, ժողովուրդին խօսածին պէս է, բայց քերականական տեսակէտով սիսալ է : Ժողովուրդը գալ, ծալ, շալ միավանկ բայերուն ժխտական տաճմանական ներկան և անկատարը անկանոն ձևի վերածած և ըրած է չ'եմ իզար, չ'եմ իգար, չ'իգար, չ'ենք իզար, չ'ենք իգար, չ'էի իզար, չ'էի իգար, չ'էր իզար ելն . Նմանապէս չ'եմ իլար, չ'իլար, չ'էի իլար ելն, չ'եմ իտար չ'իտար, չ'էի իտար ելն : Հետևաբար ուղիղ ըլլալու համար պէտք է գրել չ'իգար, չ'իտար, չի լար [փոխարէն չը իգար, չը իտար, չը իլար] և ոչ թէ չի գար, չի տար, չի լար, որոնք ինչպէս տեսանք ժխտական ստորագրական անկատարին եզ . Գ . դէմքեր են : Զ գիրին զալով՝ անիկա այսօրուան աշխարհաբարին մէջ կը գործածուի իբր միմիայն ժխտական նախամասնիկ [քէ-նիս] որ թի, անի և ուրիշներու պէս բառի մը սկիզբը գրուելով այդ բառին ժխտական իմաստը առող նոր բառ մը կը ձևացնէ, օրինակ, փոյութիւն = չգոյութիւն, ունեւոր = չունեւոր, Աստուած = չաստուած, քահանայ = չքահանայ ելն .

Դ. — Զ-ով հայցականներու գործածութիւնը . — Այսօրուան աշխարհաբարին ոգիին դէմ կատարուած մեղանշուններէն մէկն ալ զ ով հայցականներու գործածութիւնն է : Անվիճելի է որ ժողովուրդը զ ով հայցական չ'ունի երբեք : Նոյնչափ անհերք է որ գրողներուն ամէնքն ալ անխտիր կը գործածեն զ ով հայցականներ : Ասոր պատճառը, մեր կարծիքով, այս մասին, բայց միայն այս մասին, աշխարհաբարը տակաւին իր վերջ-

նական կատարելութեան հասած չ'ըլլալն է : Իրաւ ալ կը պատահին պարագաներ՝ ուր զրագէտը կ'ստիպուի սիսալ հատկցողութեան կամ Թիւրիմացութեան [imprecision] տեղի չը ձգելու համար զ ով հայցականներ գործածել . ըսել, օրինակի համար, կի՛նը գորտմուսինը սպաննեց : Այս նախադասութեան մէջ թէ՛ որ յարաբերականը առանց զ ի գործածուէր, յայտնի չի պիտի ըլլար թէ սպաննողը ով, սպաննուողը ով է : Ասանկ անտուգութիւններու տեղի չը ձգելու համար հիմակուհիմա գոնէ, ստիպուած ենք աշխարհաբար չ'եղող այս գերը գործածել, միեւնոյն ատեն ջանալով անոնց գործածուած արդարացին առարկելով թէ՛ ժողովուրդն ալ ունի ինքզինքն բառը որ ինքն և զինքն ըսողութիւնն է : Յայտնի է սակայն որ աս շատ քաջշուք արդարացում մըն է և թէ մեր կարծիքով, պէտք է կարելի եղածին չափ զգուշանալ զ ով հայցականներէն և ջանոնք այն ատեն միայն գործածել, երբ անոնց չը գործածուելով իմաստի բացարձակ անտուգութիւն առաջ պիտի գար : Ապահովաբար զ ի այս ստիպեալ գործածումները անգամ վաղուան աշխարհաբարեանները մեր երեսին պիտի տան իբր հարազատ աշխարհաբարին դէմ մեղանշուններ, ինչպէս մենք այսօր մեր նախորդներուն երեսին կու տանք իրենց գրաբարածեւ ստացուածները, հոլովները և այլն : [Կ'աւարի Յաջորդով]

ԱՐՄԵՆԱԿԱՆ ԻՆՃԷՍՏ

[Փոստաբան]

«ԱՐՇԱԼՈՅՍ»

Մեծ հաճոյքով ու խնդութիւնով կ'սղջունենք Հայերէն պատկերազարդ նոր օրաթերթի մը երեւումը մեր լրագրութեան մէջ, Իզմիրի Արշալոյսը, որուն այս շաբաթու ատացանք առաջին թիւերը : Իր առաջին թիւերը խոստմնալից են ու փայլուն՝ իբր լաւ խմբագրուած օրաթերթ մը՝ որ կոչումը ունի մասնաւորաբար Իզմիրի Հայ համայնքին լրագրական պահանջքին գոհացում տալու : Կը յուսանք և կը բաղձանք Արշալոյսը տեսնել նորանոր զարգացումի և առաջիմութեան մէջ : Մտովին յաջողութիւն կը մաղթենք մեր նոր պաշտօնակիցին :

Հիմնադիր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ, Արտօմատէր ՏՕԻԹ. Ե. ՄԱՍԻՍ, Տպագր. ՃԻՃԱՆ :

Արշալույսի Պոլիսի գործակալն է «Օսմանյը» Դրատունին Տէր Տիար
Յովհաննէս Աղնուոր, Պապը-Ալի Ճատաէսի, թիւ 56 :

ՀԵՂԻՆԱԿՆԵՐՈՒՆ ՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԱՉՆԵՐՈՒՆ

Հեղինակներէ և հրատարակիչներէ մասնք՝ որ կը բաղձան Մալիսի
մէջ ծանուցուիլը իրենց հրատարակութեան, պէտք չէ մասնան մեր
պայմանը թէ, Ձ օրինակ զըկուած գիրքերը միայն նկատուածեան
կ'անուրին և կը ծանուցուին :

ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԹԵՐԹ ազգային, գրական եւ քաղաքական .— Բա-
ժանորդագրութիւն կ. Պոլսոյ համար՝ տարեկան 80, վեցամսեայ 45
դրչ. : գաւառներու համար՝ տարեկան 108 դրչ. : վեցամսեայ 60 դրչ. :
և օտար երկիրներու համար՝ տարեկան 35 ֆր. : վեցամսեայ 20
ֆր. : Ձեռքէ վաճառուած՝ 8սուր փարս : ԱՐԵՒԵԼՔ հրապարակ
կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խնամալ բովանդակութեամբ, ըն-
տիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով :
ԱՐԵՒԵԼՔ, իր վերակազմած խմբագրութեամբ և իր կարող աշխա-
տակիցներով աստիճանաբար տեղ մը կը զբաւէ տեղական հայ մամուլին
մէջ, արժանազամ՝ բնիկերցոյններու գնահատմանը : Իր առաւելութիւններէն
մէկն է ՊՍԿԵՐԱԶԱՐԻ ԸՆԴՈՒՄ հանգամանքը, որով իր բնիկերցոյնե-
րուն կը ներկայացնէ պարբերաբար Մանօթ Դէմքեր և երբեմն ալ տե-
սարաններ : Ոչ նուազ կը գնահատուին իր մանապիտան յօդուած-
ները, եկեղեցական, կրօնական, անտեսական-սեղանաւորական, եր-
կրագործական, իրաւաբանական և այլն, բացի գրական, բանասիրա-
կան գրուածքներէ, որոնք անտեսութիւններէ են : ԱՐԵՒԵԼՔի վերաբերեալ
ամէն գրութիւն և բաժանորդագիր ուղղել Տէր և Տնօրէն Փառնգին
էֆ. Պոյաճեանի հասցէին, Ղալաթիա, Մանուկիէ Ճատաէսի, ուր կը
գտնուին թերթին Տպարանը և Խմբագրատունը :



Jeprends tous les jours
de la vraie
CRÈME DE MORUE
de la Ph^e PEQUART de VERDUN-s/-Meuse
C'est très bon!!!
Petite mère, se méfie des produits
similaires; mauvais et digérant mal.
Le Flacon : 3^{fr} 50 dans les Pharm^{ies}.
« SUPERIEURE à L'HUILE de FOIE de MORUE et aux EMULSIONS. »

Նշանուոր Տօթթ. Բէքաւի
այս Էմիւլսիօնը կը գերա-
զանցէ հրապարակի վրայ
դանուած բոլոր իր նմաննե-
րու Չաւիի իւրի տեղ կը գոր-
ծածուի և անկէ աւելի
օգուտ ունի սղոց և տկար

« SUPERIEURE à L'HUILE de FOIE de MORUE et aux EMULSIONS. »
անձերու : Միակ ներկայացուցիչ Թուրքիոյ . Ո. Սօլախեանց, Կ. Պոլիս :

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Մ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԱՄԵՆԱՎԵՐՁԻՆ ԴՐՈՒԹԵԱՄԵՐ կը դարձանէ ամէն տե-
սակ տկուայի և լինտի հիւանդութիւնները, փոսած ակուանները կը լեցնէ՝
առողջ ակուաններու պէս երկար առեն գործածուելու պայմանով :

ԲՈՂՈՐՈՎԻՆ ՆՈՐ ՄԵԹՈՏՈՎ, նորը, ճաշակաւոր և դիմացկուն
արուեստական ակուաներ կը պատրաստէ, բնականին ճիշդ նման :

Հիւանդ կ'ընդունի ամէն օր իր դարձանատան մէջ, Բերա, Մեծ
Բարձաք-Գարու, թիւ 8, Կարօս հիւանդները ձրի կը դարձանէ հի-
շարթի օրերը՝ Բերաի Աղքատախնամ դարձանատունին մէջ :

Կիրակի օրերը ժամադրութեամբ կ'ընդունի :

Մ Ա Ն Ձ Ո Ւ Մ Է Միակ առատուն Հայաթերթը, կը հրատարակուի ար-
սի և արուարձաններու ամէն կողմը, բովանդակելով հետազոտներ, քա-
ղաքական, ներքին, եկեղեցական ու կրթական լուրեր, զրական, տն-
տեսական և ընկերային յօդուածներ : Զորքարթի եւ չարաթ օրերը կը
հրատարակուի առանց ծանուցումի, չորրորդ էջը լատկայնելով առեւ-
տրական և զրական զրուածքներու : Գինն է 10 փայտ : Տարեկան բու-
ժանորդագրութիւնն է Պոլիս՝ 80 դրչ., գաւառ՝ 108, արտասահման՝ 25
ֆր. : Վեցամսեայ՝ Պոլիս՝ 50, գաւառ՝ 60, արտասահման՝ 18 ֆր. : Ամէն
զրութիւն ուղղել Տէր եւ Տնօրէն Յովհաննէս Ֆ. էֆ. Գոյսէրեանի
հասցէին՝ 38, Պապը Ալի Ճատաէսի :

ՀԱՅՈՒՆԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ, ԱՏԱԲԱԶԱՐ

Հայահեաց Վարժարանի նպատակն է Հայ ազջիկներուն ապրելով
դաստիարակութիւն մը՝ զարգացած և բարեկիրթ տանտիկիններ և դաս-
տիարակութեան զօրծին օժանդակներ պատրաստելու համար : Վարժա-
րանին տեսչութիւնը աշակերտութիւններուն ֆիզիքական, իմացական և
բարոյական զարգացումը միշտ խղճամբա հոգածութեան առարկայ
կ'ընէ : Բնիկ և Ամերիկայի 12 ուսուցիչներէ կազմուած ձեռնհաս ուսուց-
չական խումբ մը կ'աւանդէ Հայ., Անգլ., Թուրք. և Ֆրանս. լեզուները,
ինչպէս նաեւ լոնական, իմաստասիրական, չափական և ուրիշ գիտու-
թիւններ : Մնայուն կարուհի մը կ'աւանդէ ձեռագիրութեան, կարի և
ձեռագործի դասերը : Գիշերօթիկներու տարեթոշակն է 12 օսմ. ոսկի,
որուն կէսը պէտք է հատուցանել տարեշրջանին սկիզբը և կէսը Ծնուն-
դի արձակուրդին : Դաշնակի և երգեսնի համար կը պահանջուի 5, 3
եւ 2½ օսմ. ոսկի, դասառութեան թիւին համեմատ : Վարժարանին
յաւաջիկայ տարեշրջանը կը սկսի Սեպտ. 11ին (Ն. Տ.), Դշ. իրիկունը
Աւելի տեղեկութեանց համար խնդրել Վարժարանին Յայտագիրը կամ
դիմել Մր. Բիթի, Պապը Հառա, Կ. Պոլիս, կամ գրել Տօքթ. Ս. էֆ.
Գալաշեանի, Ատենապետ Խնամակալութեան, Ատաբազար :

ՏՈՒՆԷՆ ՆԵՐՍ.—Հրապարակ կ'աւ Բասիմի այս աշխատասի-
րութիւնը, որ կը պարունակէ ընտանեկան և ընկերական հարցերու
վրայ շահեկան և հետաքրքրաշարժ տեսութիւններ, ժողովրդական
ոճով : Բասիմի գրելակերպը արդէն ծանօթ ըլլալով հանրութեան,
վստահօրէն անոր այս գործն ալ սիրտի արժանանայ այն սիրալիր ըն-
դունելութեան, որով վարձատրուած են միշտ հեղինակին գրիչի ար-
տագրութիւնները : Գինը, խիստ աժան գրուած է, որպէս զի ժողո-
վուրդին ամէն դասակարգին մատչելի ըլլայ : 3½ դրչ., 200 էջ ունե-
ցող այս գիրքին համար : Կը ծախուի ըստ զրաւճառներուն քով :

ՓԱՆԱԳԱՇԵԱՆ ԱՂԶԿԱՆՅ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐՃԱՐԱՆ

ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ, ԳԵՇԵՐՈՓԻԿ ԵՒ ՅԵՐԵԿԵԱՅ

Կ. Պոլիս, Գասը-Գիւղ, Մէօհիւրսուր հասէսի .

Յոյ Տարեցոյան

Մասնագէտ ուսուցիչներու և ուսուցչուհիներու ձեռամբ, ասմային ուսումներէ և գիտական տնտեսական ծանօթութիւններէ զատ, հիմնական կերպով կ'ուսանդուն Հայերէն, Օսմաներէն, Ֆրանսերէն, Անգլերէն և Գերմաներէն լեզուները՝ հանդերձ խօսեցողութեամբ (բռնաբիւ) . ինչպէս նաեւ Գծագրութիւն, Տարարութիւն, Կար ու Ձեւ, Առեղծագործութեան զանազան տեսակները (ձեռքով և մեքենայով) , ձայնական և գործիական երաժշտութիւն, մասնաւորապէս Դաշնակ և Զութակ : Գիշերօթիկները կը վայելեն կատարեալ մտնդ և ընտանեկան անթերի խնամք, առողջապահիկ պայմաններու մէջ : Բանակցութեան համար զիմել վարժարան՝ Տեսուչին կամ Տեսչուհիին : Մանրամասն տեղեկութիւն կարելի է ստանալ նաեւ, Գշ. եշ. Շր. օրերը ժամը 5էն 9 զիմելով «ԳԱՐՈՒՆ» Գրատունը, Մեծ Նոր խան, վերի յարկ, թիւ 55 : Աշակերտուհիներու վերամուտը տեղի յիտի ունենայ Սեպտ. 3, Բշ. օր :

Հիմնադիր-Տնօրէն
Ե. Գ. ՓԱՆԱԳԱՇԵԱՆ

ԱՓՈՍԹՈԼԻԲ ԻՆՍՅԻԹԻԹ, ԳՈՆԵԱ

(ՃԵՆԱՆԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ)

Վարժարանիս առաջիկայ տարեշրջանը կը սկսի Սեպտ. 13/26ին : Հաստատութիւնս կէտ նպատակի ունենալով գոյէճական ճրագրով մը բարձր և միանդամայն գործնական կրթութիւն մը տալ ուսանողներուն մասնագէտ դասատուներու միջոցաւ, կ'ուսանդէ Օսմ. Հայ. Անգլ. Ֆրանս. և Յունարէն (Յոյն աշակերտներու համար) լեզուները, ինչպէս նաեւ բնական, բնագաւառական, առողական, փիլիսոփայական, իրաւագիտական և վաճառականական գիտութիւնները : Մեծ խնամք կը տանի աշակերտներու բարոյայան մաքրութեան և ֆիզիքական առողջութեան : Դպրոցական նոր տարուան համար ուսուցչական մարմինին վրայ աւելցած է նաեւ համալսարանական բժիշկ մը՝ որ պիտի զստախօսէ առողջապահական և բնական գիտութիւններ և ձրապէս պիտի դարձանէ հիւանդացող աշակերտները, եթէ գտնուին : Գիշերօթիկներու տարեթոյական է 10 Օսմ. ոսկի, որուն կէսը վճարելի կանխիկ և բիւս կէսը՝ Միսունդին : Մանրամասն տեղեկութեան համար զիմել . Տնօրէն Տօքթ. Ա. Յ. Հայկազեանի, Դանիա :

“ՄԱՍԻՍ,,Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոլիսի և գաւառներու համար տարեկան 60 դրշ :
 Արտասահմանի » » 14 ֆրանք :
 Թղթատարութեան ծախքը մեր վրայ :
 Բաժանորդները իրաւունք ունին ստանալու մեր պարգևները,
 միշտ ձրիաբար, թղթատարութեան ծախքն ալ մեր վրայ :
 Մասիսի բաժանորդագրութիւնը բացարձակապէս կա խիկ է :
 Զննատարակուած ձեռագիրները ետ չեն գարձուիր :
 Նամակ կամ որ և է գրութիւն ուղղել առ

ԵՆՈՎՔ ԱՐՄԵՆ

“ՄԱՍԻՍ,,Ի Հասցեով

Պապը Ա.Լի ճաւսէսի, Թիւ 38

درعليه باب عالی جاده سنده نومرو ۳۸ «مسیس» غزته سی اداره خانه سی

Rédaction de la Revue «MASSIS»

N. 38, Avenue de la Sublime Porte

CONSTANTINOPLE

ՌՕՊԷՐԴ ԳՕԼԷՃ Վարժարանիս յառաջիկայ տարեշրջանը կը սկսի Սեպտ. 5/18ին : Կարգադրութիւններ եղած են վաճառականական ուսումը բաղձացուած կատարելութեամբ աւանդելու համար : Վարժարանիս մասնաւոր բժիշկը՝ ուսանողներուն առողջութեան, մարմնամարզներուն և խաղերուն, ինչպէս նաև վարժարանիս ընդհանուր առողջական վիճակին վրայ կը հակէ : Մարմնամարզի նոր և գեղեցիկ շէնք մը կառուցուած է նորոգապէս, իր մէջ ունենալով մարմնամարզի ամէն տեսակ գործիքներ, վերջին գրութեանց համաձայն :

“ՄԱՍԻՍ”ի վեցամսեայ Շրջանի հաւաքածոն, որ 550 էջէ բաղկացած գրական գեղեցիկ հասոր մը կը կազմէ, հիմաւ ստացուիլ խմբագրութենէս, կանխիկ փոխարժէքով՝ 30 դր. . կազմուած 35 : Թղթասարով դրկուելիք Հասորներու համար պէժ է 5 դր. աւելի վնարել :

Դպրոցներու վերաբացումին՝ աղոց ձեռքը ընկիր դասագիրքեր տուած ըլլալու վստահութեամբ՝ դորձածել՝ Փայադաշեանի հրատարակութիւններէն՝ Ա.—Պգիկներուն Թուագիտութիւնը : Բ.—Թուագիտութիւն Տարրական Դասընթացի (Ա. և Բ.Տարի) : Գ.—Պգիկներուն Աշխարհագրութիւնը (քարտէսներով) : Դ.—Աշխարհագրութիւն Տարրական Դասընթացի : Ե.—Պգիկներուն Երգարանը (հաւաքածոյ մանկապարտէզի երգերու) : Զ.—Այլեւստան Ընթերցարան ֆրանսերէն լեզուի :